

323:1(566)

2 - 15

Գ. Պ. ԶԱԼԻՆՈՒՇԵԱՆ

318/
II

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԹԱԻՍԱՍՏԱՆՈՒՄ

168600

Թարգմ. Ա. ԿԱԶՅԱՆԻՆ

(Օգոստի մի մասը յատկացվում է վերջին զեղքերից
վեսուածներին)

Թ. Ի. Յ. Լ. Ի. Ա.

Տպարան Մ., Վարդանեանի, Գանովսկ, № 3.

1906

ԳՐ. ԶԱԼԻԿՈՒՆԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԹՐԻՎԱՍՏԱՆԻՄ

Թարգմ. Ս. ՆԱԶԱՐԵՏՅԱՆ



(Օգոստի մի մասը յատկացված
վաստածներին)

Տպարան Մ. վարդանեանի, Գանովսկ. № 3.

1906

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌԱԻՍԵՍՍԵՆՈՒԹ

«Ես հաւատացած եմ կովկասցին
ների հաւատարիմ հպատակութեան
թագաւոր Կայսրին. Որի համար բո-
լոր տեղական ժողովուրդները հաւա-
սար մօտ են և թանգ»:

(Կովկասեան Փոխարքայի հեռագիրը 1905 թ. մարտի 30-ից)

I

Փոքր ինչ պատմուրիւն եւ փոքր ինչ վիճակագրուրիւն

Բերկըալի զգացմունքով հայերը կարդացին
գեներալ լեյտենանտ Մալամայի պաշտօնական
յայտարարութիւնը՝ հանդերձ կովկասեան Փո-
խարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի հեռա-
գրի բովանդակութեամբ։ Առանձնապէս մեզ հա-
մար թարգ է, որ կոմսը ընդգծում է իր հեռա-
զբում, թէ ինքը յոյս ունի կովկասեան ազգու-
թիւնների բարեխոն մեծամասնութեան աջակցու-
թեամբ ձեռնարկել օգտաւէտ բարենորոգումների։

Երեխան չի լացի՝ մայրը կաթ չի տայ, բա-
րեխոն մեծամասնութեան պարտականութիւնն է
«լալ» իր զրկանքների, վիրաւորանքների, ա-
նարդարութիւնների, վերջապէս, կարիքների

համար, որպէս զի Փոխարքան իմանայ, թէ ինչ
պատճառով, ում յանցանքով կովկասում խանգա-
րուած է հանգստութիւնը և ինչ կերպ կարելի է
վերականգնել և ամրապնդել նրան:

Ահա թէ ինչու մենք, հայերս, այժմ և եթ,
առանց ապշելու, բայց համարձակ ազնուարար
և անկեղծութեամբ պէտք է յայտնենք, թէ ինչու,
օ: ինակ, մեզ համար կովկասի այդ ուրախու-
թեան, ծիծաղի, բանսաստեղծութեան գեղեցիկ
վարդը, յանկարծ դառել է անհիւրասէր, վշտի,
թախիծի, արտասուքի երկիր...

Հայկական հարցը գոյութիւն ունէր միայն
Թիւրքիայում, բայց մեր թիւրոկրատիան ճարողիկ
միջոցներով կարողացաւ այդպիսի հարց ստեղ-
ծել և Ծուսաստանում՝ հայրի կամքի և ցանկու-
թեան հակառակ: Այդ հարցը այժմ կատարելա-
պէս հասունացել է և նրան պէտք է վճռել: Վըճ-
ռել նրան կարելի է միակ ճանապարհով այն
է հեռացնելով, անուշադրութեան թողնելով այն
բոլոր զրպարտութիւնները, որոնք կեանք տուին
հայկական հարցին:

Հայերի համակրանքը, ինչ էլ որ չասեն
մեր չարակամները, միշտ եղել է Ծուսաստանի
կողմը, որի համար, սկսած Պետրոս Մհծի պան-
ծալի ժամանակից *) ամրապնդեց քրիստոնեա-

*) Վերին աստիճանի հետաքրիք է Պետրոս Մհծի յա-
րաբերութիւնը հայերի հետ: Ծուսաստանի հանձարեղ վե-
րանորոգիչը, հրաւիրելով հայերին Ծուսաստան՝ հրամանա-
գրում է՝ «Ի՞նչքան հնար է շոյել հայերին և պաշաճաւոր
դիւրութիւններ տալ, որպէս զի դրանով հրապուրուեն և

ների հովանաւորողի անունը Արևելքում։ Դէպի հայերն ունեցած սուսած համակրութեան մասին վկայում է Ալեքսանդր Ի-ի հրովարտակը Տեպլիցայից 1813 թուի սեպտեմբերի 15-ից, որի մէջ արտասանուած է «ամենասիրելի և հաւատարիմ հայկական ժողովուրդին», «արդար երախտագիտութիւն և բարեհաճութիւն»։ XVIII-րդ դարի վերջից սկսած հայկական կումաւորները սուսաց յաղթական զօրքերի շարքերում պատերազմում էին թէ թուրքերի և թէ պարսիկների դէմ։ Այսուհանդերձ հայերը լաւ ծանոթ լինելով երկրին, ժողովուրդի բնաւորութեան, տեղացիների լեզուին և իրանց լայն հիւրասիրութեամբ քիչ չէին նպաստում սուսաց զէնքի աջողութեան։ Մուսաց և օտար լրագիրների շատ պատերազմական գրողներ, թղթակիցներ հիացմունքով արձանագրում էին թիւրքահայերի հանդիսաւոր հանդիպումը իրանց հոգևորականների առաջնորդութեամբ սուսաց զօրքին Դարսում, էրզրու-

աւելի շատ գան»։ (Полн. собр., т. IV, 1711 г. № 2330, Им. гк. сенату). 1724 թւի նոյեմբերի 11-ի հրովարտակով, գեներալ-մայօր Կրօպօտիկի անուան, Պետրոս-Մեծն ասում է՝ «Ճականաց (հայերին) ամեն օգնութիւն և պահպանել նրանց ամուր հովանաւորութեամբ և վարուել այն կերպ, որպէս զի նրանց կողմից երբէք գանգատի առիթ չը լինի, քանզի Մեծք այդ հայկական ժողովաւրդը մեր առանձին Կայսերական Ռուսական պարմածուրեան եւ Խովանաւորեան տակ ենք ընդունել»։ (Собр. актовъ, отн. къ обозр. исторіи армянск. народа, ч. 1, ст. 165). Այդպէս էլ ամեն ժամանակ բարեցակամ է վերաբերուել դէպի հայերը և եկատիրինա Մեծը։

մում և ուրիշ կետերում՝ վերջին ռուս-թուրքական պատերազմի ժամանակ։ Այդ հանդիպումները, որոնք մշտապէս յետ մղեցին հայերից թիւրքերին, դարձնելով նրանց մեզ անհաշտ թըշ-նամիներ, վերջը, երբ ռուսները մաքրեցին իրանց բռնած տեղերը, մեզ չատ թանգ նստեցին, երկար ժամանակ կը լով անարգանքներ, հալածանքներ, նախատինք և տալով անվերջ արիւնալից զոհեր։ Եւ չը նայելով այդ բոլորին չը նայելով նրան, որ թիւրքական պատերազմից օգտուեցին սուլթանի իշխանութեան տակ գըտնուող բոլոր ազգերը, իսկ մենք ձեռնբաց մնացինք *): Ռուսաց անունը յիշվում էր ամեն ժամանակ և ամեն տեղ, ուր միայն ապրում են հայեր, մի տեսակ շնորհապարտութեամբ և յուսատու զգացմունքով և մեր չարչարուած, տանջուած, սրտերում ինչ որ թանգ էր և պանծալի ռուսաց անունը, կարծես նա ծառայում էր իրրե նշանաբան ազատուելու մահմեդական լծից և հարուելու եւրօպական քաղաքակրթութեամբ...

Յետոյ սկսուեցին հայկական կոտորածնե-

*) Սա՞ն-Ստեփանօի պայմանագրի 16-րդ յօդուածը և Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը... Աւելի լաւ էր չը լինէին նրանք. այնքան արեան և տանջանքի պատճառ դարան նրանք մեզ համար։ Քանի գոյութիւն կունենայ Բարձրագոյն դուռը, քանի գոյութիւն կունենայ հոչակաւոր եւ ոպական կօնցէրաւ՝ կաթիլ-կաթիլ նօրալով աւելի շուտ կը սպառուի հայկական վերջին արիւնը՝ քան կը վճռուի հայկական հարցը Թիւրքիայում։

ըլ, որոնց զարհուրանքները, դեռ թարմ են մեր
 յիշողութեան մէջ, որպէս զի նըանց մասին խօ-
 սենք շատ և երկար է: Ամբողջ Եւրօպան սարսեց:
 Հարիւր հազարաւոր զոհեր լողում էին իրանց
 արիւնի մէջ, օգնութիւն աղերսելով: Տեղի ունե-
 ցած փոթորկալի միտինգներ Անգլիայում, Թրան-
 սիայում, Շվեյցարիայում, Իտալիայում՝ կարմիր
 սուլթանի դէմ: Միայն Գերմանիան պաշտպա-
 նում էր նրան. կոտորածի աղմուկի և զոհերի
 հեծեծանքի տակ ստանալով առանձնաշնորհում-
 ներ, պատուէրներ և Պալիստինայում հողերը
 չկիլհէլմ կայսրը մինչև անգամ ուղարկեց իր
 պատկերը ի նշան համակրութեան: Բոլոր հայե-
 րը սրտի տրոփիւնով սպասում էին, թէ ինչ
 կասէ Ռուսաստանը: Նրա միայն մի բառից էր
 կախուած հարիւր հազարաւոր տանջուողնիրի
 ճակատագիրը և կեանքը: Բառը արտասանուեց,
 բայց ոչ ի նպաստ հայերի: Մեր գեսպան պ.
 Նելիդով արտաքին գործերի մինխստ իշխան
 Լոբանով-Ռոստովսկու պահանջմամբ, որը հաս-
 տատում էր, թէ միզ հարկաւոր է Հայաստանը
 առանց հայերի, յայտնեց բոլոր գեսպաններին,
 թէ Ռուսաստանը հակառակ է որ և է ստիպողա-
 կան միջոցի բարեկամ սուլթանի դէմ և զրանով
 եւրօպական ներդաշնակութիւնը խանգարուեց:

Ես քիչ գիտեմ քաղաքականութիւն, կարե-
 լի է դա պահանջում էր քաղաքագիտական ի-
 մաստութիւնը (թէև բոլոր օգուտից շահուեց մի-
 այն Գերմանիան) բայց ոչ մի կասկած չը կայ,
 որ Ռուսաստանը կտրականապէս դաւաճանեց իր

հին աւանդութիւններին և առաջին անգամ ներկայացաւ Արևելքի քրիստոնեաների հովանաւորողի պատուաւոր դերում, այլ յայտնուեց ծանը, պատասխանտու. և իրան ոչ յատուկ դերում՝ հանդիսանալով իբրև պաշտպան սուլթունի սրբազն իրաւունքների պաշտպան քրիստոնէութեան հալածողին և թշնամուն:

Ես քիչ եմ հասկանում քաղաքականութիւնից, բայց ես գիտեմ, որ ներկայ դէպքում մեր արտաքին քաղաքականութիւնը դեկավարվում էր ներքին քաղաքականութեամբ, որը բոլորովին փոխուած էր հայերի վերաբերմամբ:

Ել խօսք չը կար, «արդար երախտագիտութեան» և «բարեհաճութեան»: Ուրիշ ժամանակ էր այժմ և այլ երգեր լսվում:

Լսել էք դուք հին արևելեան արածը ուժեղ առիւծի մասին, որը չէր սիրում իր ձագին և ուզեց ոչնչացնել նրան: Առիւծը բոթեց նրան տղմի մէջ ապականեց նրան ցեխում. և... չը ճանաչեց նրան: Չը ճանաչեցին առիւծի ձագին և ուրիշ առիւծներ, ինձեր և վագրներ: Այն ժամանակ առիւծը ծուատեց իր ձագին:

Աստուած իմ, ով միայն զրպարտութիւններ չարեց հայերի հասցէին և չը ջանաց, ապականել նրանց պարսաւանքների մածուցիկ ցեխով: Աւելի մեծ աղաղակ բարձրացնողը այդ վոհմակի մէջ ներկայանում էր հանգուցեալ վերիչկօն, այդ փոքրիկ բանաստեղծը և մեծ մարդատողը, կովկասեան կարավարչապետի պաշտօնական օրգանի էջերում ամեն օր մի առանձին

ոգեսրութեամբ և կատաղի կհրպով հնարում
էր ամեն չեղած բան, աշխատելով թունաւորել
բոլոր ազգերին հայերի դէմ: Մինչև իսկ երբ
լուր հասաւ Թիւրքիայի հայերի կոստրածի մա-
սին, որ Վելիչկօն ապացուցեց, թէ հայերին
այդպէս էլ հարկաւոր է!...

Ընդհանրապէս այդ բոլոր շինծու բառերի
կատակումներով ճգնում էր հաստատել թէ հա-
յերը վաշխառուներ են, որոնք սարդի պէս տա-
րածել են իրանց ցանցերը մարդկանց շուրջը,
ուր նրանք ապրում են կեղերիչ միտումներով:
Հայերը, գրվաւմ էր այդ յօդուածներում տիրա-
պետում են տեղական հարստութիւններին, մեծ
կապեր ունեն տեղական իշխանաւորների հետ.
այնպէս որ բոլոր տեղական աստիճանաւորները
գտնվում են նրանց ձեռքում, որոնց շնորհիւ և
տեղական ամբողջ առևտուրը իրանց ձեռքն են
գցել: Զրպարտութիւնը կատարեց իր գործը և
ուստի ժողովուրդի մեծամասնութիւնը, քիչ է ճա-
նաչում հայերին, յօժարութեամբ հաւատում էր
այդ առասպնդներին և գուցէ և հաւատում է և այժմ՝
Ճիշտ է, երեան եկան վիճակագրական տեղեկու-
թիւններ, որոնցով կարելի էր դատել, թէ ինչով
են պարապում հայերը և իսկապէս նրանք վաշ-
խարուներ են թէ ոչ: Բայց շատերն են մեզա-
նից կարդում հաստ ամսագրեր: Ցետ այնօրիկ
կարդացածն էլ շուտով մռացվում է, բայց
այստեղ ամեն օր հազարապատիկ կրկնվում էր՝
«վաշխառուներ», վաշխառուներ,

ե հոկտ. համարներում տպուած Գր. Զանշեանի «Եղբայրական օգնութիւն» գրքի մէջ (հրատ. 1897 թւի Մօսկուա) ապացուցվում է այս, որ հայ ազգաբնակութեան $95^0/_{\circ}$ -ը կովկասում բախ-կացած է երկրագործութեամբ պարապող գիւ-ղացիներից: Իսկ ինչ վերաբերում է քաղաքնե-րում ապրող հայերուն՝ դրանց $90^0/_{\circ}$ -ը պարա-պում է արհեստներով, այս, այսպէս ասած, ոև աշխատանքով: Ոչ կով ասի արտաքին արևտու-րը, ոչ արդինագործութիւնը, ոչ գործարանա-կան շահագործութիւնը չեն գտնվում հայերի ձեռքում: Եւ այդպիսով ոչ մի արդիւնաբերական ճիւղի մէջ հայերը գերակշռոջ դիրք չեն բռնում:

Երբ շահագործութեան և վաշխառութեան մէջ բոլոր մեղադրանքները բաւականացրին նրա ատամնահարութիւնները և բաւականաչափ զօ-րեղացաւ ոռւսաց հասարակական կարծիքը հա-յերի դէմ, նրանց երեսին շպրտեցին ուրիշ, այ-ժըմ աւելի ծանր և վտանգաւոր մեղադրանք,— անջատման ձգտման և խոռվարարութեան մէջ մեղադրելով նրանց: Այդ մեղադրանը արտա-քուստ արդարացի էր երեսում շնորհիւ նրան, որ կովկասեան հայերը անկարող լինելով անտար-քեր մնալ թիւքքական դէպքերին և ցանկանալով օգնել իրահց անձար հայրենակիցներին խօս-քով և գործով՝ զէնքը ձեռին անցնում էին սահմանը և անց էին կացնում այնտեղ զէնք: Հայերի չարակամները սկսեցին լուրեր տարածել զէնք անցկանցելու մասին հաստատելով թէ հա-յերը պատրաստվում են ապստամբուել ոռւսաց

կառավարութեան դէմ: Յանկարծ սկսեցին խօսալ հայ յեղափոխականների մասին, ամեն տեղ գոյութիւն ունեցող, ամեն բան իմացող և ամեն բանի պատրաստ, նոյնպէս խօսեցին և հայկական միլիօննիրի մասին:

Խնդրի առաջին մասը իրագործուեց, ամբողջ հայ ազգը բաւականաչափ կասկածուեց, ցեխոտուեց: Խնդրի միւս երկրորդ մասը՝ «Ճնշել», «արմատախիլ անել» հայերին՝ մնաց:

Այդ խնդրի երկրորդ մասի իրագործելու մտքով կեանք տրուեց հայկական հարցին:

Դժուար է ասել ինչպէս ընթացաւ գործը այս հանգամանքում կովկասեան բիւրօկրատիան ոգեսրեց մեր մամուլի առանձին օրգաններին, թէ վերջինները ներգործեցին նրան, անկասկած է միայն փաստը որ բիւրօկրատիան յանկարծ ձեռնարկեց իրագործել օտարօտի և հակամարդկային միջոցներ, որոնք քարոզվում էին մեր մամուլի յայտնի օրգանների էջերից, որոնց ես չեմ անուանել, առհասարակ դէպի ոռւսաց մամուլը տածած յարգանքի պատճառով:

Ամեն մի հայի համար եղկու սրբութիւն կայ—դպրոց և եկեղեցի, եկեղեցի և դպրոց:

Հայոց գպրոցը փակուեց և հայոց եկեղեցին գրկուեց իր իրաւունքից, որ սրբագործուած էր աւելի քան հազարաւոր տարիներով:

Հայկական դպրոցների փակումը

Քանի որ Կովկասեան երկրին գլուխ էր կանգնած Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչը, որ լաւ ծանօթ էր ազգաբնտկութեան, որը կապուած է նրա հետ անձնական յիշողութիւններով, չը կար և հայոց հարցը: Հայոց հորցը ծագեց փոխարքայութիւնը ոչնչացնելով և Կովկասեան կառավարչապետի պաշտօն հիմնելուց յետոյ, որ ահեղի ունեցաւ 1882 թուին:

1883 թուին առաջին անգամ խօսուեց հայկական խոռվարարների մասին:

1885 թուին փակուեցին հայոց դպրոցները: Էջմիածնի ոռուաց կայսրութեան միանաւուց յետոյ ձեռնարկուեց առանձին կանոնների մշակման հայլուսաւորչական եկեղեցիների համար:

«Մեր թագաւորի կամքն է,—գրում է, 1829 թուի մարտի 15-ից, ներքին գործերի մինիստր կոմս Բլուզով կոմս Պասկեվիչին, —պատրաստել հայլուսաւորչական եկեղեցիների կանոնադրութեան ծրագիրը ըստ կարելոյն պահպանելով նրա հին կարգերը և ծէսերը, որոնք, ի հարկէ շատ թանգ են ժողովուրդի համար»:

Այդպէս էր Նիկոլայ I կայսրի կամքը:

Կանոնադրութիւնը նրանով հաստատուեց 1836 թուի մարտի 11-ին, 1206: Այդ կանոնադրութեան յօդուածի համաձայն հ. XI մ. I հրատ. 1876 թ. «Հայերի կրթութեան համար աստուա-

ծաբանական գիտութեան մէջ» թոյլատրուած էր
Էջմիածնում բացել ճեմարան և ամեն մի թե-
մում մի սեմինարիա: Այդպէս 1824 թ. Թիֆլիզում
բացուեց սեմինարիա, 1837 թուին Երևանում,
1839 թուին Շուշում և Նոր-Նախիջևանում, իսկ
1876 թուին բացուեց Էջմիածնի ճեմարանը:

Իրա հետ միասին բացուեցին հայկական
ծխական-եկեղեցական դպրոցները, որոնք ծա-
ռայում էին իրեն պատրաստական դասարաններ
սեմինարիանների համար: Այդպիսի դպրոցների
թիւը սկզբում միծ չէր: Բայց հայերը միշտ
ապրել էին ոռւսների հետ մի հոգւով, միասին
ուրախանալով և միասին տիրելով: Վաթունա-
կան թուականի երջանիկ ժամանակը անհետք
չանցաւ և հայերի համար: Պուշկինի, Լերմօնտո-
վի, Նեկրասովի, Գոգոլի, Տուրգենևի, Տոլստոյի,
Բէլինսկու, Պիսարեվի, Գրանովսկու և այլ
պանծալի անունները, որքան թանգ էին
հայերի համար: Հայերը կարդում էին նրանց
գրական արտադրութիւնները, որոնց բեղմ-
նաւոր տպեցութեան տակ ստեղծուեց ոռւ-
սահայերի համար հարուստ գրականութիւն և
առաջ եկան փայլուն տաղանդներ, ինչպէս էին՝
Արովեանց, Նալբանդեանց, Շահ-Աղիզ, Նազարեան
և ամենաբնակուր վիպասան Բաֆֆի և բանաս-
տեղծ Պատկանեան:

Վաթունական թուականների շարժումը հա-
մակեց և հայերին: Հայերն սկսեցին ուժգին կեր-
պով ձգտել կրթութեան և քիչ ժամանակում
կովկասը ծածկուեց հայկական դպրոցների ցան-

յով։ 1882 թուին Թիֆլիզում Գէորգ Ա կաթողիկոսի բարեհաճութեամբ կայացաւ հայ ուսուցիչները առաջին և գժրադասաբար, վերջին ժողովը։

Մեր մամուլի յայտնի մասը սկսեց թմբկահարել։ Ինչպէս ինչ որ հայեր համարձակվում են հաւաքուել ուսուցչական ժողովի։ Դա չափազանց է։

Եւ նորից սկսուեց զրպարտութիւն։ Յիշուեցին թէ հայկական մի քանի դպրոցներում գտնվում են «Մեծ-Հայաստանի» պատմական քարտեզները *), յիշեցին, թէ հայ աշակերտները (ինչպիսի յանդկնութիւն) երգում են «Տէր, պահեա զկայսրն» հայերէն լեզուվ։ Cavant conseuls! Զրպարտութիւնը զուրկ էր հողից, բայց մեզանից ով չը գիտէ, որ զրպարտութեան ոյժը կայանում է նրա ստութեան մէջ։

Նշանակուած է վերաքննութիւն հեղինակաւոր և բարեխիղճ մարդկանցից, որպէս զի պարզուի, թէ ճիշտ է արդեօք, որ հայոց դպրոցներում պարապում են հականկառավարչական պրօպագանդայով և այդ պրօպագանդան կապ չունի հայերի դէպի Անգլիան ունեցած համակրանքի հետ։ Կովկաս եկան օտար դաւանութիւնների դէպարտամենտի դերեկտօր Մասլով և իշխան է. է. Ռւխտօմսկի։ Թննութիւնը փայլուն կերպով ապացուցեց ամբողջ ստութիւնը, քսութիւնը և

*) Մեծ Հայք—դա կազմում է Հայաստանի մի մասը և այդպէս անուանվում է իրեւ հակագիր Փոքր Հայքի Դա մենք նկատում ենք կողմանակի կերպով «Մեծ Հայաստանը մինչև Ռոստօվ-Դոնի վրայ» մակագրութեամբ—Գէկտօն կազմողների հասցէին։

ամբաստանութիւնը հայերի մասին։ Դժբաղխտարար, փորձառու բիւրօիրատիան նախազգուշացրուած էր։ Տեղական բիւրօկրատիան ապացուցեց, թէ հայերը դանկանում են վերականգնել «Մեծ-Հայաստանը», թէ Կաթողիկոսը արդէն ծէրէ և իր հեղինակութիւնով ազդում է սինօդի վրայ, թէ հոգևորականութիւնը, ինտելիգենցիան և մամուլը վարակուած են հակառակառավարչական դադափարով։

1885 թուին փակուեցին հայոց դպրոցները, փորց շպրտուեցին երեսուն հազար աշակերտներ և 900 ուսուցիչ։ Ընդամենը փակուեցին 500 դպրոցներ։

Ուսանելի է ամենից առաջ,—պատմական տեսակէտից նկատենք,—ներկայ հարցում մեր լուսաւորութեան մինիստրի կատարած դերը։

Կռվկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու պլ. Եանօվսկի գործ դրեց ամեն հնար, որպէս զի հայոց դպրոցները փակուած լինեն, թէև երեսում էր, որ նրա ուղղակի պարտականութիւնն էր պաշտպանել նրանց, մամուլի անցորդների զազրելի յարձակումներից։ Վերջ ի վերջոյ պլ. Եանօվսկին հասաւ իր նպատակին։ Այդ այն Եանօվսկին է, որ 50 տարի վարելով ուսումնարանական գործը Ռուսաստանում և Կովկասում՝ այդքան ժամանակամիջոցում չը կարողացաւ բացել երկու հարիւր ուսուաց դպրոց, բայց կարողացաւ յանկարծ մի օրում փակել հինգ հարիւր հայոց դպրոցներ։

Մասամբ հայկական դպրոցները փակուեցին

1886 թուին Մակար I կաթողիկոսի ազդեցութիւնը վերականգնելու համար, որը կաթողիկոսական երկրորդ կանգիքատ էր և չէր սիրուած հայերից։ Մակարի մահից յետոյ 1895 թուին դպրոցները բոլորովին փակուեցին։

Շատ խօսուեցան մեզանում այն մասին իբրև թէ հայերը իրանք են փակել իրանց դպրոցները։ Այդ առարկութեան անպաճոյն լինելը հասկանալու համար, պէտք է իմանալ թէ ինչ էր պահանջում հոգաբարձու պ. Եանօվսկին։ Ի միջի այլ իրան յատուկ պայմանների հետ՝ նա առաջադրեց այսպիսի հրեշտոր պահանջներ՝ — անսամման թւով և աշակերտներ և ուսուցիչներ կարող են կախուած լինել ուսումնարմնական հոգաբարձուի կամքից ոչ հայերից, հայոց լիզուի դասը, հայոց կրօնի ուսուցումը, իբրև աւելորդ առարկաններ, կրծատվում են ամբողջովին, դպրոցների պահպանութիւնը ամբողջովին պէտք է հայերի հաշւին լինի։ Օտարօտի է, ճիշտ չէ, առնուազն եթէ աշակերտներ և ուսուցիչներ պէտք է լինեն ոչ հայեր, էլ թնչու ուսումնարանները պէտք է անուանուեն հայկական, և որ գլխաւորն է՝ պէտք է պահպանուեն հայերի հաշուավ։

Հարկաւոր ուշադրութիւն դարձրուեց, ի հարկէ, և հայոց հոգեոր միջնակարդ դպրոցների վրայ. 1900 թուից, հակառակ հատ. XI մաս I-ի 1206 յօդուածի նոր սեմինարիաների բացման թոյլատութիւն չէ տրվում և մինչև իսկ բարձրատաղանդ և հայերից առանձին յարդանք վայելող Խորէն Ստէփանէ եպիսկոպոսը Բագւում

Ծամախութեմի համար սեմինարիա բացելու նը-
պատակով նույրատութիւններ ժողովելու պատ-
ճառով արտաքսուեց Կովկասի սահմաններից, նը-
կատուելով իրեւ անբարեյոյս և անհանգիստ մարդ:

Հրատարակվում է կառավարչական բացատրութիւն թէ հայոց սեմինարիաները և մինչև իսկ էջմիածնի ճեմարանը չեն օգտվում առանձնաշնորհումներով զինւորագրութեան վերաբերմամբ, որով նրանք օգտվում էին մինչև այդ ժամանակ, և կսած 1887 թուից, երբ մտցրուեց զինւորագրութիւն Կովկասում, հաւասարապէս ոռուաց և կաթոլիկ սեմինարիաների:

Վերջապէս, եկեղեցական կայքերի վերցնելը, որոնց միջոցով պահպանվում են սեմինարիաները և էջմիածնի ճեմարանը, կը ստիպէ այժմ վերացնել և իրողապէս փակել նրանց։ Եթի ես գրում եմ այս տողերը, ես կիմանամ, որ ճեմարանը փակուած է։

Ով գիտէ, կարելի է հիմի էլ գտնուեն այս-
պիսի սրախօսներ, որոնք վերկենան և ապացու-
ցանեն, թէ հայերն իրանք են փակել իրանց թե-
մական դպրոցներն ու ճեմարանը:

Դպրոցների փակելով հայերի համար վերջ-
նականապէս չը փակուեց դէպի լուսաւորութեան
առաջնորդող ճանապարհ։ Քոյութիւն ունէին կըր-
թական հաստատութիւններ, և գլխաւորապէս գո-
յութիւն ունէին բարեգործական լնկերութիւն-
ներ, որոնք չքաւոր են անձնագիր էին տալիս
կրթութիւն ուսումնական գործություններում։

Եւ ահա հայոց դպրոցների փակելուց յետոց հետեւում է և հայոց բոլոր կրթական և բարեգործական հաստատութիւնների փակելը:

III

Հայոց կրթական եւ բարեգործական հաստատութիւնների փակումը

Եթէ ուշադրութեան առնենք, որ հայերը կովկասում թուով մէկ ու կէս միլիօն են, այն ժամանակ այնտեղ գոյութիւն ունեցող բարեգործական հաստատութիւնների քանակութիւնը անբաւարար էր մինչև իսկ:

Այդ հաստատութիւնների գլուխ էր կանգնած «Կովկասի հայոց բարեգործական ընկերութիւնը», որի կանօնադրութիւնը հաստատուած էր 1881 թուի յունիսի 6-ին: Ընկերութեան նպատակը շատ համակրելի է, նկատուած է կանոնադրութեան առաջին կէտում: Նա նպաստում կրթութեան և արհեստների տարածման կովկասի և Անդրկովկասի հայերի մէջ, Ընկերութիւնը օգնութիւն է գալիս ուսանողներին, կառավարութեան թոյլաւողութեամբ բացում է նոր դրագոցներ, պահպանում է արդէն գոյութիւն ունեցողները, հրատարակում է գրքեր և պահպանում է կրթական հաստատութիւնները:

Մօտաւորապէս այդպէս էր և գոյութիւն ունեցող հայոց միւս բարեգործական հաստատութիւնների նպատակը, ինչպէս Բագուի «Հայոց Մարդասիրական ընկերութիւնը», հաստատուած դեռ 1863 թուին և «Թիֆլիսի հայոց կանանց

բարեգործական ընկերութիւնը», հաստատուած
1881 թուին:

Սակաւ բացառութեամբ այդ ընկերութիւն-
ների գործունէութիւնը կայանում էր գիմնազիա-
ների և բէալական դպրոցների չքաւոր աշակերտ-
ներին օգնութիւն ցոյց տալում:

Կովկասի հայոց բարեգործական ընկերու-
թիւնը, օգտուելով իր իրաւունքից, իր գործու-
նէութեան 15 տարուայ ընթացքում բացեց 18
բաժանմունքներ փոքրիկ քաղաքներում և մեծ
գիւղերում:

Մամուլի զանազան ինսինուացիաների ճընշ-
ման տակ, 1894 թուին ձեռնարկեց մանրամասն
և լուրջ քննութեան հայոց բարեգործական ըն-
կերութիւնների բոլոր գործերի, որ տուեց բա-
րերար հետևանք քնող հաստատութիւններին,
իրողութիւնը պարզուեց ճշտագոյն կանօնադրու-
թեան սահմաններից չանցած և կատարելապէս
օրինաւոր:

Սակայն այդ ըննութիւնից յետոյ դուրս
եկաւ կարգադրութիւն, որ ընկերութեան նոր
բաժանմունքները բացուեն միայն Բարձրագոյն
հրամանով: 1899 թուին բոլոր այդ հայոց բարե-
գործական ընկերութիւնները փակուեցին:

Ինչով նրանք մեղաւոր հանդիսացան կով-
կասեան վարչութեան առաջ:

Առաջադրած հարցի պերճախօս պատաս-
խանը ծառայում է, այն տարրական, կամ աւելլ-
ճիշտը անբնական կանօնադրութիւնը այդ բա-
րեգործական ընկերութիւնների, որ գրուեց յատ-

կապես հայերի համար և որը ամենալաւ կերպով
բնորոշում է կովկասնան բիւրօկրատիայի յարա-
բերութիւնը դէպի հայերը:

Պէտք է հասկանալ, որ դեռ երկու տարի
առաջ մինչն հայոց բարեգործական հաստատու-
թիւնների փակելը, այն է 1897 թուին մեր կա-
ռավարութիւնը մշակեց տարրական կանօն բա-
րեգործական լնկերութիւնների համար Ռուսաս-
տանում, որի նախագիծը յայտարարուեց ներքին
գործերի մինիստրութեան անտեսական դէպար-
տամենտի կողմից 1897 թուին յունիոի 16-ին
№ 5328. նախագիծը աչքի առաջ ունի, թէ կա-
րևոր են ներկայ հանգամանքում և օտարադառն-
ները: Հարգաւուր է միայն արտագրել տարրական
կանօնագրութիւնը, անուանել նոր բացուելի լն-
կերութիւնը և նահանգապետը առանց յարաբե-
ռութեան մէջ մտնելու մինիստրութեան հետ,
թոյլատրվում է նոր լնկերութեան բացումը:

Մենք գիտենք որ շատ լնկերութիւններ
ծնունդ առան այդ կերպի:

Տարրական կանօնագրութեան պակասու-
թիւնը կայանում է աւելորդ ձեականութեան մէջ,
բայց լնդհանրապէս նա բաւականացուցիչ է:
Թւում էր թէ օրէնքը պարտագիր է և կովկասի
համար, իսկ տարրական կանօնագրութիւնը պէտ-
քական է և հայերի համար: Այդպէս չը նայեց
գործին կովկասի ազմինիստրացիան: Նա հեղի-
նակեց նոր կերպի կանօն, օրինակելի կանօն
հայոց բարեգործական լնկերութիւնների համար,
որոնք իրաւունք չունեն բարեգործութիւն անե-

լու!... Այդպիսի պայմանների մէջ են դրած և
քարշ են տալիս իրանց խղճուկ գոյութիւնը թիֆ-
լիսի հայոց բարեգործական ընկերութիւնը, թիֆ-
լիսի կանանց բարեգործական ընկերութիւնը,
Բագուի հայոց Մարդասիրական ընկերութիւնը:
Այդ բարեգործական ընկերութիւնների իրաւունք-
ները բարեգործութիւն անելու մէջ այնքան սահ-
մանափակուած է, որ դժուար է ընդունել նրանց
իբրև բարեգործական հիմնարկութիւններ: Կա-
րելի է աղքատին տալ հաց, թէյ, կերակրել նրան,
հագցնել, ապաստան տալ, բայց չէ կարելի նրանց
երեխաններին տալ կրթութիւն, ուսման նպաստ և
այսպէս թէ այնպէս օգնել լուսաւորութեան վտան-
գաւոր գործում: Ամեննեին!

Դուք կարող էք հազցնել աղքատների փոք-
րիկներին, բայց Աստուած ազատէ! — ոչ դիմնա-
զիական համազգեստ! Ճիշդ չէ արդեօք, դրանից
հեռու բիւրօկրատիան հայերի հալածման մէջ և
ինչպէս որ լինի ստեղծել հայկական հարց՝ Հը-
կարողացաւ վնամ:

Սխալվում էք, դուք կը տեսնէք, որ նա
հեռու գնաց!

Բարեգործական հաստատութիւնների փակ-
ման հետ փակուեցին և համակրելի, համեստ,
ստեղծուած գերմարդկային ջանքերով ցրուած
կովկասի և Անդրկովկասի քաղաքներում և գրա-
դարան ընթերցարանները, որոնք դուքս էին քա-
շում մարդկանց պանդոկներից, գինեաններից, և
ներշնչում էին սէք դէպի կրթութիւն հասարակ,
ուամիկ մարդկանց:

Վերջապէս 1900 թուի յունիսի 16-ին փակուեց «Հայոց հրատարակչական ընկերութիւնը» որի կանօնադրութիւնը 1880 թուին յունուարի 21-ին հաստատել էր Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ:

«Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութիւնը,—յայտնուամ է կանօնադրութեան երկրորդ կէտը,—նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով օրինակելի թարգմանական գրքեր, պահպանելով ցէնզուրական ընդհանուր կանօնները»:

Դա մի համեստ ընկերութիւն էր տարեկան 5000 լուրջի փոքրիկ բիւջէտով իր 21 տարուայ գործունէութեամբ հրատարակելով 187 հրատարակութիւն, այն է՝ թարգմանական—133, ժողովածու—33 և ուսանելի—21։ Այստեղ կան Շէքսպիրը, Դօդէն, Մօպասանը, բայց աւելի մեծ թիւը կազմում է ոռոսաց հեղինակութիւնները։

Որովհետեւ բոլոր այդ հետեւողական սիստեմի միջոցները նպատակ ունէին, եթէ թոյլ կը տաք, այսպէս արտասանել վերադարձնել հայերէն իրանց նախկին դրութեան, զրկել նրանց լուսաւորուելուց և ստիպել նրանց ոռոսանալ, այն ժամանակ, ի հարկէ, հարկաւոր ուշադրութիւն էր դարձուած և հայոց մամուլի վրայ, նոր ամսագիրների և լրագիրների հրատարակելը բոլորովին թոյլ չէր տրւում, բայց հիները հեշտութեամբ փակվում էին, թէև նրանք հրատարակվում էին նախնական ցէնզուրայի թոյլտութեամբ և հետեւաբար ոչինչ յօդուածներ փոքր ինչ ինքնուրոյն և ազատ մըտ-

քով գրուած չէր թոյլատրվում։ Այսպէս փակուած էին՝ «Արձագանք» շաբաթաթերթը, մանեական ամսագիր «Տարազ»-ը, դադարեցրած էր «Մշակը» և «Նոր-դարը»—ցէնզուրայից թոյլատրած յօդուածների պատճառով! Տեղական ցէնզուրայի խստութիւնները զարմանալի են։ Հայոց լրագիրներին և ամսագիրներին վիճակուած է առաջնորդողներ և բանասիրականներ գրել միայն թատրօնների մասին, եւ այդ էլ կարգացւում է տողերի տրանքներօվ։ Զեն թոյլատրուել յօդուածներ սունկերի վլասակաբութեան մասին, որովհետեւ, բացատրում է ցէնզորը. «սունկերը սիրելի կերակուր են ուղղափառների»! Զէ թոյլատրուել յօդուած չոր մրգերի էկապօրտի մասին, բանը մրգերի էկապօրտի համար չէ, բայց մրգերի տակ Աստուած գիտէ հեղինակը ինչ խորհրդաւոր միտք է յայտնում։ Արժէ թուել աւելի։ Այդ բոլորը վկարերում է հայրենի կուրիօզների աշխարհին, որը, ի հարկէ, կը գտնի իր անաշառ պատմագրին։ Այդ բոլորը վերաբերում է, ասում ենք մենք կուրիօզների աշխարհին և մենք, ի հարկէ, ոչ միայն կը ծիծաղէինք, այլ կը խղճայինք նաև, եթէ չը ցաւէինք տեղական լեզուվ գրողների համար, որոնք իրանց ամբողջ կեանքում գրում են Եղեղոսի լեզուով, յոյս չունենալով երբ և է գրել բնական մարդու լեզուով փոքր ազգութիւնների կարիքների մասին...»

Ցէնզուրայի խստութիւնները հասել են այնտեղ, որ Բաֆֆիի յայտնի հեղինակութիւնները,

ուղղուած թիւրքերի դէմ և բարի զգացմունքով
վերաբերուած դէպի ռուսները, երկրորդ հրատաւ-
րակութեամբ կարողացան լոյս տեսնել միայն
արտասահմանում, Վենետիկի Մխիթարեանների
տպարանում։ Մինչև իսկ արգելուած է «Վարդա-
նանց պատերազմ» պատմական պիեսայի նար-
կայացնելը, որը նկարագրում է հայերի կոփը
պարսիկների հետ Վ-րդ դարում հաւատի համար։
Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ նոյն
իսկ Պարսկաստանում ոչ թէ միայն այդ պիեսայի
ներկայացումը թոյլատրուած է, բայց սովորա-
բար մինչև իսկ գահաժառանգը այցելում է այդ
պիեսայի ներկայացումը!...

IV

**Եկեղեցական կալուտծների վերացնելը և Նարողի-
կոսի աստիճանի փոքրացնելը**

Բոլոր վերոպքեալ Ֆիջոցները նպատակ ու-
նէին արմատախիլ անել հայոց լեզուն:

Այժմ տեսնենք այն միջոցները, որնք մեր,
հայերիս կարծիքով կովկասի իշխանութիւնը գործ
է գրել, ցանկանալով կործանել հայոց եկեղեցու
հիմքերը այդ միակ մխիթարութիւն պասճառողը
թշուառ ժողովուրդին։

Հրաման 1903 թուի յանիսի 12-ին։ Յունիսի
12-ին դուրս եկաւ հրաման հայոց եկեղեցական
կալուտծների վերցնելու առիթով։ Այդ համանը,
որ նոյն իսկ հաւանութիւն չը գտաւ մինիստրնե-
րի կօմիտէտում, ունի իր ուսանելի պատմու-
թիւնը։

Երբ փակուեցան հայոց դպրոցները, կովկասի վարչութիւնը սկսեց հայերից առնել եկեղեցական կալուածները, որոնց արգիւնքով պահպանում էին դպրոցները։ Ապացոյցների ներկայացնելը, հրամանագրների, զանազան դօկումենտներից ցոյց տալը, որոնք հաստատում էին, թէ այդ կալուածները պատկանում են եկեղեցիներին և նրանց կատարեալ սեփականութիւն են կազմում՝ չը կանգնեցրին իշխանութիւններին։ Ուսումնարանական շրջանի հոգաբարձուն բացարձակ յայտնեց, որ եթէ իր կարգադրութիւններին չեն հաւանում հայերը՝ թող դիմեն դատարանին, իսկ աղմինիստրացիան պահանջում էր անպայման խոնարհուել։ Այդպիսով շատ կալուածներ հայերից իրողապէս վերցուեց։ Երբ կաթողիկոսի բողոքները չօգնեցին, այն ժամանակ դատարանին առաջադրեցին պահանջներ, որոնք ինչպէս և պէտք էր սպասել, բոլորն էլ բաւականութիւն ստացան կատարելապէս, դատաստանական խոշոր ծախսեր դնելով լուսաւորութեան մինիստրութեան վրայ։ Եւ ճշմարիտ, հայկական եկեղեցական հիմնարկութիւնները տիրում էին իրանց կայքերին համաձայն 1212 յօդուածի հատ. XI մ. I հրատ. 1896 թուի։ Շատ հողեր և տիղեր բաղկանում էին իրեւ էջմիածնի սեփականութիւն հին ժամանակներից պարսից արքապետութեան։ օրերից, յաճախ ինչպէս առատ նուէր պարսից Շահերից, որոնցից շատերը յարգանք էին տածում դէպի էջմիածնի սրբութիւնները և

ընդունում էին նրա իրաւունքը և գեսակշռությունը:

Երբ մեր դատարանները վճիռներ կայացրին յօգուտ հայերի, կովկասի աղմինիստրացիային աջակցելու համար յայտնուեց յունիսի 12-ի հրամանը: Դա միանգամից զրկեց հայ եկեղեցիներին նրանց գոյութեան բոլոր աղքիւրներից: Հայ եկեղեցին զրկվում է իրաւունքից օգտուել իր կայքերի արդիւնքից և գումարների տոկոսներից, նա իրաւունք չունի կարգադրութիւններ անել բայց վերապահում է իր իրաւունքները իբրեւ սեփականատեր: Օրինակելի իրաւունք է առանց որ և է իրաւունքի! Եթէ սակայն կարելի էր ստեղծել բարեգործական հիմնարկութիւն առանց բարեգործութիւն անելու իրաւունքի, էլ ինչու չէ կարելի ունենալ ինստիտուտ սեփականութեան իրաւունքի առանց հասկանալու սեփականութեան իրաւունքը? Մինչև իսկ այն ինչ որ պէտք է կտակուի եկեղեցուն՝ պէտք է պատկանի ոչ թէ եկեղեցուն, այլ գանձարանին: Հայոց եկեղեցին ճանաչվում է անընդունակ: Իրաւաբանական մտքով, օրէնքը ստեղծեց, յամենայն դէպս, ինչ որ նօրուրին անյայտ գիտութեան մէջ, ինչ որ հակաբնական: Գանձարանը խնամակալ է հայոց եկեղեցուն: Բայց ամեն խնամակալութեան վերջ է լինում, իսկ այս խնամակալութիւնը ասես երկնային թագաւորութիւն է, անվերջ է! Խնամակալութեան տակ եղողները օգտվում են արդիւնքից և տոկոսներից, այստեղ խնամակալու-

թեան տակ եղողը ոչինչ չէ ստանում և ոչինչ էլ
չի ստանայ:

Ահա մեզ և մի փոքրիկ պատկեր,—Նոր-Նա-
խջևանում Բաղարնի հրապարակում զանվում է
մի մեծ տուն, որն առատ նուէր է անգլիահպա-
տակ հայ բարեգործի Հնդկաստանից: Վերին հար-
կերում տեղաւորուած է հայոց սեմինարիան, իսկ
ներքին յարկում տեղաւորուած են մի շարք խա-
նութներ: Ալժմ արդէն երկու տարի է կապա-
լառուները կապալավճառը տանում են գանձա-
քանը. իսկ սեմինարիան հազիւ հազ մասնաւոր
ողորմութեամբ ծայրը հասցնում է ծայրին: Ուրիշ
հայոց սեմինարիաներում և ճեմարանում աւելի
վատ է! Ուսուցիչները քաղցած են բառացի նշա-
նակութեամբ, դասաւորութիւնը սպանիչ է...

Եւ արդպիսի ամբնական կարգ գոյութիւն
ունի ոչ թէ Թիւրքիայում կամ Պարսկաստանում,
այլ եւրօպական պետութեան մէջ: Ես հարցնում
եմ ում և ինչի՞ համար այդ բոլորը հարկաւո-
րուեց և հարկաւո՞ր է դարձեալ...

Եթէ 1903 թուի յունիսի 12-ի օրէնքի նը-
պատակն էր զրկել հայոց եկեղեցին գոյութեան
քոլոր միջոցներից, այն ժամանակ 1903 թուի
հոկտեմբերի 18-ի օրէնքի նպատակն է, զրկել
կաթողիկոսին իր անկախութիւնից և նշանակու-
թիւնից և կաթողիկէ եկեղեցին այն իրաւունք-
ներից, որոնք ապահովուած էին նրա համար սկսած
Գրիգոր Լուսաւորչից, այսինքն Վ-րդ դարից:

Համաձայն 1140 յօդուածի հ. XI մ. I. Կա-
թողիկոսը սինօղի անդամութեան համար ներ-

կայացնում է երկու թեկնածու և դարերով ուրբագործուած աւանդութեամբ սովորաբար առաջին կանդիդատը հաստատվում է Թագաւոր Կայսրից: Բայց վերջին ժամանակներս Կաթողիկոսի տասնամեայ առաջադրութիւնը մնում է ձայն բարբառոյ յանապատի և սինօդի անդամներ նշանակվում են առանց Կաթողիկոսի գիտութեան և երբեմն նրա կամքի հակառակ, անարժան մարդիկ կամ յամենայն դէպս պատրիարքին անպէտք, ի վեաս հոգեոր կարգապահութեան:

1903 թուի հոկտեմբերի 18-ի օրէնքը արմատախիլ է անում հայոց եկեղեցու առաջին Քահանայապետի բարձր դիրքը: Հայոց Կաթողիկոսը մինչև իսկ տիրացուներ և քահանաներ չէ կարող նշանակել առանց համաձայնութեան աղմինիսուրական և ոստիկանական սանկցիաների իշխանութեան: Դուրս է գալիս ինչ որ զարմանալի և առհասարակ անհաւատալի. քանի որ այդպիսով Կաթողիկոսը եկեղեցու ստորին պաշտօնեաների վերաբերմամբ աւելի պակաս իրաւունք ունի, քան, օրինակ, ոստիկանական պրիստաւը կամ թաղական հսկողը!...

Կաթողիկոսին միակ մխիթարութիւն մնաց այն, թէ Կովկասի բիւրօկրտուիան դրանից հեռու էլ չի գնայ, էլ տեղ չը կայ գնալու:

1868 թուից լոյս է տեսնում Կաթողիկոսի պաշտօնական «Արարատ» օրգանը խղճուկ բովանդակութեամբ, առանց նախնական ցէնզուրայի: 1897 թուին «Արարատը» հնթարկվում է Թիֆլիսի ցէնզուրային: Նոյն իսկ հայոց օրացոյց-

Դերի թոյլատւութեան իրաւունքը խլվում է Կաթողիկոսից:

Թէև դրանք մանր բաներ են, բայց ընորոշ, որոնք ապացուցանում են այն, որ տեղական իշխանութիւնները վճռել են որքան հնար է ստորացնել, առանց կարիքի դրանում. ամեն միջոց գործ դնելով նոյն իսկ մանր բաներին խարութիւն չը դնելով, վիրաւորելով արժանաւորութիւնը, պատիւը, նշանակութիւնը և կոչումը ութառնամեալ ծերունի նահապետի!...

Երկու հարցում ևս սկսաւը կրնաւեց Կաթողիկոսի իրաւունքները այն է ապահարզանի և երգման հարցում: Համաձայն 1132 յօդուածի հ. XI մ. I «առաջնորդուելով հայ լուսաւորչական եկեղեցու հինաւուրց կանոններից՝ պատրիարքը վերջնականապիս վճռում է զուտ հոգեոր գործերը»: Ապահարզանը պսակի խորհուրդ նկատուելով և երգումը եկեղեցու մէջ՝ հայկական եկեղեցու հինաւուրց կանոններով ճանաչվում էին իրու հոգեոր գործ: Սենատը տալիս է առանձին, մեր եկեղեցական կանոնների հետ կապ չունեցող բացատրութիւն... Այժմ ապահարզանը վերցուած է Կաթողիկոսի իրաւասութիւնից, իսկ երգումը պէտք է ընդունուի ոռւսաց լեզուով:

Իբրև գեղեցիկ աւանդներ բուն պետական գործող մարդկանց՝ կոմս Վօրօնցովի, Պատկերչի, Բարեատինսկու և այլոց, որոնք աշխատում էին բարձրացնել հայ հոգեորականութեան ազգեցութիւնը և նշանակութիւնը, մոռացուած էր բոլորովին այդ նշանակութիւնը և ամեն մի հայ աշ-

Քում Կաթողիկոսի սրբազան աստիճանը 1903 թուից դադարեց մինչև իսկ... պատուաւոր յիշուելու!...

Զուգընթացաբար Կաթողիկոսի սրբազան աստիճանի փոքրացնելու հետ, բարձրանում է սինօդի պրօկուրօրի կոչումը, որը սկսեց գործել զանազան շրջաբերականների, հրամանագիրների և ցուցմունքների հիման վրա։ Սինօդի պրօկուրօրը սկսում է խաղալ իր կոչման ոչ յատուկ դեր և ստանում է գերակշռող նշանակութիւն։ Հակառակ 1139 յօդուածի հ. XI մ. 1. արդէն պրօկուրօրը սինօդի դիւանատունը համարում է իբրև իր սեփական դիւանատուն, նշանակում է պաշտօնեաներ Կաթողիկոսից չը համակրուած կամ նրան հակառակորդ անձնաւորութիւններից բոլորովին անուշադրութեան թողնելով վերջինին Կաթողիկոսը լինելով սինօդի նախագահ, չէ կարող հրամայել սինօդի դիւանատան գրագրին!...

Սինօդի նախկին պրօկուրօր պլ. Կանչելին դրա վերաբերմամբ վաստակեց առանձին հռչակ, իրաւունք տալով իրան երբեմն մինչև իոկ բարձրացնել իր ձայնը Կաթողիկոսի ներկայութեամբ և վարել նրա դէմ ինտրիգաներ։ «Россия» լրագրի մէջ երդուեալ հաւատարմատար Դ. Բալուղեան առաջ էր բերում ճնշող վաստեր, որոնցով հաստատում է թէ պլ. Կանչելին աւելի վերադասեց ապրել Թիֆլիզում, ուր պէտք է հասցնէին նրան սինօդի ամբողջ գործակալութիւնը։ Այդպիսով էջմիածնի սինօդը գրեթէ վերացուած էր, գործում էր միայն պլ. Կանչելիի գրասենեակը...»

V

Ի՞նչու համար են յուզվում հայերը

Ի՞նչու համար են յուզվում հայերը։ Այդ
խնդրին կարծեմ արդէն մենք պատասխանել ենք։
Գործերի դրութեան բոլոր պատճառաբանութիւն-
ները, որոնք վերաբերում են դպրոցներին, կը թ-
թական և բարեգործական հաստատութիւննե-
րին, եկեղեցուն և Կաթողիկոսին՝ անպայման
վրդովեցուցիչ բնաւորութիւն ունէին, և նոյն իսկ
առանձին միջոցների արագ գործադրութիւնը չը
կարողացաւ նպաստել որ և է հանգստութեան
ամրապնդման հայերի մէջ։ Մենք զգում էինք,
որ հալածվում ենք անպայման, որ Կաթողիկոսի
աղերսները չեն օգնում գործին։ Մեզ ամեն մէ-
կիս պատում էին տխուր մտքեր։ Իրողութիւնը
անմիշթարական էր։ Մենք բոլորս էլ հետզհետէ
գառանք կասկածելի և կասկածելի։ Այդ բոլորը
մւր պէտք է տանի։ Ինչու համար։ Հետամտա-
բար հարցնում էինք մենք։

Անկասկած էր, մեզանից պահանջում էին
սաիպմամբ ոռւսանալ! Եւ մենք չը կարողացանք
նկատել, որ հայերէն լեզուի դասաւութիւնը
արտաքսուած է ամեն տեղից, մինչև իսկ Արևե-
լեան լեզուների Լազարեան ճեմարանից, հիմնուած
ոռւսաց կառավարութեան յայտնի ծառայութիւն
մատուցած հայերից։ Հայոց լեզուն արտաքսվում էր!
Հայոց կրօնի ուսուցումը կամ չէր կատարվում, կամ
կատարվում էր անպարտադիր կերպով, իբրև աւե-

լորդ առարկայ, միկրոսկօպիկական քանակութեամբ, այնուամենայնիւ աղմինիստրացիան ջանում էր, որ հայոց կրօնի գասատութիւնը կատարուի ուսւաց լեզուով։ Ում համար է գաղտնիք, որ օրինակ, նախիջևանցիք տանեակ տարիներ աշխատում են, որ քաղաքի միջոցներով բացուեն գիմնազիա կամ բէալական դպրոց այն պայմանով, որ հայոց կրօնը աւանդուի հայերէն լեզուով։ Երկու անգամ իր պատգամաւորները գնացին Պետերբուրգ և մի անգամ Խարկով հոգաբարձու պրօֆէսոր պ. Ալեկսենկօի մօտ։ Իզուր աշխատանք! Եւ այդպէս մինչև այժմ մենք չունինք ոչ գիմնազիա և ոչ բէալական դպրոց *)...

Ի վերջոյ հայոց նոր տաճարների շինելը այլ ևս այնպէս հեշտութեամբ չեն թոյլատրում և եղել են մերժման դէպքեր։

Բայց այդ բոլորը նսեմանում են համեմատելով այն վատանգի հետ, որ ներկայանում է հայերին ուղղափառութիւնը կովկասում վերականգնեցնող ընկերութիւնից։ Հայերը ընդունել են քրիստոնէութիւն գեռ IV-րդ դարում և ձախորդութիւններ կրեցին իրանց հաւատի համար իրանց հարևաններից և այժմ էլ գեռ հաւատի համար շատ են տանջվում թիւրքիայում։

*) Այս տողերը գրելուց յետոյ գուրս եկաւ հրովարտակ ապրիլի 17-ին «Կրօնական համբերողութեան սկզբունքների ամբապնդման մասին»։ Այդ հրովարտակը գեղեցիկ քննադատութիւն է կովկասեան աղմինիստրացիայի բոլոր աղմկալի գործունէութեան հայ լուսաւորչականների վերաբերմամբ։

Հայաստանում ապրում էին շատ քրիստոնեաներ նոյն իսկ Փրկչի ժամանակից և ինչ: Միթէ դարմանալի չէ, որ հարկաւոր եղաւ նորից դարձնել նրանց գէպի քրիստոնէութիւն: Փոխանակ նրան որ ուղափառութիւնը տարածող ընկերութիւնը իր ամբողջ ջանքը գործ դնէր դէպի քրիստոնէութիւնը դարձնելու կոպիտ, վայրենի լնոնականներին, կումիկներին և այլոց, նա ձեռք է առել հայերին, նոյն իսկ նահանգապետների եռանդուն մասնակցութեամբ, որոնք յաճախ մոռանում են իրանց ուղղակի պարտականութիւնը և ընդունել են միախօներների գեր: Այդպէս էր, օրինակ, Երևանի նահանգապետ Շալիկովը: Երբեմն քահանաները այցելում էին բանտերը, խոստումներ անելով բանտարկեալներին, իսկ ուղղափառ հայերը կառավարութեան մտահոգութեան առարկայ էին դարձել:

Պետական ծառայութեան մէջ հայերը վաղուց չեն ընդունվում: Հին ծառայողներին տեղեր էին առաջարկում Ծուռսաստանում: Եւ ծննդական վկայականները հայերի համար ներկայանում էին իրեւ ապացոյցներ նրանց քաղաքականապէս լինելու մասին: Ակսուեցին հայերի խմբական արտաքսումները Կովկասեան սահմաններից, ինչպէս հասարակական հանգստութեան համար վասակար մարդկանց: Հազարաւոր մարդիկ թողնում էին զբաղմունքները, ընտանիքը, ընակավայրերը, միայն կասկածանքի պատճառով, առանց դատելու, քննութեան ենթարկելու, միայն շնորհիւ վկայութեան ոստիկանական ստորին իշխանա-

ւորների միշտ մնալով գաղտնիք հէնց իրանց զռանիքի համար: Բոլոր այդ հայերը արտաքսվում էին ինչպէս յանցաւորներ, մեր անգրկելի կայսրութեան զանազան քաղաքները: Ինչքան այստեղ անմեղ զռներ կային: Ինչքան մարդիկ աւերուեցան: Քանիսները չը կարողացան տանել այդ փորձանքները: Ինչքան վիշտ: Ինչքան արտասուրք:

Ինչպէս կարող էր ժողովուրդը բաւական լինել, ուրախանալ, ժպտալ? Ինչպէս կարելի էր պահպանել հանգստութիւն?

Իսկ հայ փախստականները թիւրքիայից?

Նրանք քիւրդերի բարբարոսութիւնից աղաստուելու համար փախան կովկաս առանց անցագրերի: Նրանց իսկոյն երկրի սահմաններից ուղարկեցին Ռուսաստանի խորքերը: Երբ ես գրում եմ այս տողերը, իմ ձեռքում գտնվում է նամակ ստացուած Մինզելինսկու (Ուկիման նահանգ) համակը ստորագրուած է տասնհինգ խնդրողներից: Նրանք անցագիրներ չունեին, քանի որ փախել էին թիւրքերի հալածանքից և կովկասեան աղմինիստրացիեան կարգագրեց արտաքսել նրանց դէպի հեռու Մինզելինսկ: Լեզու նրանք չեն հասկանում, բառացի նշանակութեամբ քաղցած են չունենալով մի կտոր հաց: Ասացէք խընդրեմ, ինչով են նրանք յանցաւոր, նրանով որ իրանք ծնուել են մահմեղական անիրաւ հողի վրայ իբրև ըրիստոնեանների և նրանք եկան մեզ մօտ իբրև ըրիստոնեանների մօտ: Եւ ի՞նչ ենք անում մենք? Մինք նրանց արտաքսում ենք!

Գիտէ արդեօք ընթերցողը յիշաչար հայերի պատմութիւնը Սուխումի շրջանում և առհասարակ Սև ծովի ափերում? Թիւրքիան պատերազմից յետոյ նրանք տեղափոխուեցին այստեղ Տրոպիկօնից, Սամսոնից և նրա շրջաններից։ Այդ երկիրը բաղկացած էր միայն անանցանելի, ոերտ ճահիճներից։ Զերմից մեռնում էին հազարաւոր գաղթականներ։ Եւ ահա եկան հայերը, ինչպէս հաւատացնում է իշխան Շէրվաշիձէն, և ծաղկեցրին երկիրը, արդիւնաբերելով ընտիր ծխախոտ։ Նրանք արթնացրին մինչև այդ ժամանակ քնած երկիրը, կեանք տուին նրանու Բարձրացան հողերի գները *): Աւելացան գանձարանի եկամուտները։ Ծխախոտի տեսակը հասուր զարմանալի կատարելազործութեան և դափաստ է։—Այստեղից արտահանվում է ծխախոտ... Եգիպտոս։ Հայերը ընտելացան երկրին։ Տներ եկեղեցիներ շինեցին։ Նրանք քսան հազար հոգի են։ Յանկարծ Կռվկասի աղմինիստրացիան կարգադրում է գաղթեցնել հայերին հեռու Սիւրիրի խորքերը։ Միջնորդութիւնները աղաչանք ները չօգնեցին։ Բայց, բարերադգարար գործի մէջ խառնուեցին ուսումնական ընկերութիւններ, եռվկասագէտներ։ Գենցըրալլէյտենանտ Մալաման խոստացաւ մասնակից լինել նրանց վիճակին։ Բայց Բնչքան կան այդպիսիներ—յուսահատու-

*) Մի գեսխատին հողը, որ տուած տալիս էր մի բուքը եկամուտ՝ այժմ տալիս է 20-ից մինչև 30 բուքի։ Հողի գինը բարձրացաւ 15 անգամ աւել։ Առաջ նրա դեսիատինը արժէր 20—40 ր., իսկ այժմ 300—400։

թիւնը, արտասուքը, որոնց մենք չենք տեսնում
և որոնց վիճակին ոչ ոք ուշադրութիւն չէ դարձ-
նում!!*):

Եւ ինչպէս վերջին վիրաւորանք,—այդ Բա-
գուի կոտորածի սարսափելի լուրն էր, ինչպէս
վերջին տխուր ձայն թաղման հանդիսի, այրուող
անտանելի ցաւով համակեց մեր բոլորիս վշտա-
հար սրտերը!...

Նշանակուած Ա. Մ. Կուզմինսկու սինատօ-
րական քննութիւնը կը հանգստացնէր, ի հարկէ,
հասարակական կարծիքը, եթէ հեռացնէին պաշ-
տօնից տեղական իշխանաւորներին։ Ահա թէ ին-
չու ապրիլի 10-ին 600 հոգի զանազան ազգու-
թիւններից բազկացած բագուեցի աւելի յայտնի
մարդիք մատուցին սինատօր Կուզմինսկուն հա-
ւաքական խնդիրք, որի մէջ ցոյց էին տալիս,
թէ ոկտուած սինատօրական քննութիւնը, որի
նպատակն է, Բագուի կոտորածի պատճառները
պարզել, անդիմագրելի արգելքների կը հանդիպի,
որովհետև տեղական ադմինիստրացիան կարող է
ձնշում գործ դնել, որն այնքան տխուր զեր կա-
տարեց վերաբռնի 6—9-ի դէպքերի ժամանակ,
և այդ բոլորը միացած մամուլի վրայ գործ դրած
արգելքի հետ՝ «փակվում են տեղացիները» բե-

*) Թիւրքահպատակ հայերը, որոնք ընդունել են ուս-
անպատակութիւն և կրում են բոլոր հարկերը, բանի
տարաւայ բնրացեամ գրկուած են ձեռք քերել սե-
փականուրիւն Ռուսաստանում, մի և նոյն ժամանակ
կորցնելով իրանց անշարժ սեփականութիւնը թիւրքիայում։
Ահա թէ ինչու թիւրքահպատակը վախում է, ինչպէս կրա-
կից, ոուսանպատակութիւն ընդունել:

բանները»: «Աչքի առաջ ունենալով այդ՝ Բագուի քաղաքացիները, ճշմարտութիւնը պարզելու համար, անպայման անխուսափելի են գտնում։ 1-ին հեռացնել պաշտօնից քննութիւն կատարելու ժամանակ Բագուի նահանգապետ Նակաշիձէին և բոլոր նրա ստորադրեալ ոստիկանսկան աստիճանաւորներին, 2-րդ ձեռք առնել եռանգույն միջոցներ աղմինիստրացիայի սպառնալիքների դէմ և 3-րդ քննութիւնը կատարել ժողովուրդի և հիմնարկութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ ձայնի կատարեալ իրաւունքով»:

VI

Խճչպէս է վճռվում հայոց հարցը

Նախ քան պատասխանել առաջադրուած հարցին, ես անհրաժեշտ եմ համարում կանգ առնել մի երեսյթի վրայ հայոց հարցում, որը դարձնվում է իր վրայ ոռուս հասարակութեան ուշադրութիւնը։ Չատերին անհասկանալի լինելով և բամենայն դէպս դիտմամբ այլ կերպ լուսաբանուած լինելով մամուլի յայտնի մասի կողմից։ Ես խօսում եմ հայկական յեղափոխական կօմիտէտների մասին։

Յեղափոխական խմբերի հայնըրի մէջ ծնունդ առնելու հնարաւորութիւնը չէր սպասվում։ Հայերի սկզբունքը հետեւեալ նշանաբանն էր. «Ես աշխատում եմ, ես տանջվում եմ հետեւաբար և ապրում եմ» *):

*) «Экономическое положение турецкихъ армянъ». Гр. Арцруни. Москва, 1880 г.

Բայրոնը, մօտ ուսումնասիրելով հայոց պատմութիւնը, ասում է. «Դժուար է դանել մի ժողովուրդ, որի տարեգրութիւնը քիչ լինի բծաւորուած յանցանքներով, քան թէ հայ ժողովուրդը, որ գծերն են—բարութիւն, հեղութիւն, խոկարատները միշտ հետիանք են բանութիւնների» *): Սակայն բոլոր ուռւաց և օտար ազգի ուսումնականները այդ բանում համաձայն են, տարածայնութիւն չը կայ հայերը համարվում են անպայման խաղաղ տարր, առանց կոռուի հետամուտ և բնածին ատելութիւն են տածում դէպի դէնքը:

Բայց որտեղից յայտնուեցան հայ յեղափոխական կօմիտէտները:

Երբ ամբողջ թիւրքաց Հայաստանը լողում էր արհան մէջ, հայերը թողին իրանց ունեցած ատելութիւնը դէպի դէնքը և ձեռք առանց դէնքի Ռուսաստանում և արտասահմանում սկսեցին կազմակերպուել, շրջաններ, կօմիտէտներ:

Երիտասարդութիւնը դիմաւորուեց, անցաւթիւրքաց սահմանը, գնաց խոկական մահի համար, հասցրուած լինելով յուսահատութեան քիւրդերի նեղութիւններից և գաղանութիւններից: Հաշուեցէք, եթէ կամենում էք նրանց յեղափոխականներ, բայց այդ շարժումը ուղղուած էր ոչ թէ Ռուսաստանի, այլ Թիւրքիայի դէմ:

Իրա համար, խօսելով հայոց հարցի մասին

*) Lord Byron's, Correspondence, let. 258. Venise. 2
Janv, 1817.

Ռուսաստանում, չէ կարելի խօսել հայերի «յեղափոխական շարժման» մասին, որ ձգտում է այլ նպատակի: Ես կասեմ աւելին, այդ շարժումը ոչ թէ թշնամքաբար է Ռուսաստանին, ինչպէս պետութեան, այլ անպայման նրան օգուտ է, ինչպէս յայտնի հակակշռութիւն մի ուրիշ աւելի զօրեղ շարժման, դեռ ոռւսաց հասարակութեան անյայտ համիսլամիզմի, որի հետ մենք պէտք է հաշիւ տեսնենք վաղ թէ ուշ, և որի համար բաւական հոգ է պատրաստում Կովկասեան բիւրօկրատիան *):

Ցոյց տալով հայ յեղափոխականների վտանգաւորութիւնը, մի քանի աշխոյժ ոռւսացնողներ տուաջարկեցին հետեւեալ ձևով վճռել հայոց հարցը.—«Կովկասը ոռւսացնելու համար և հայ սեպարատիզմը արմատախիլ անելու նպատակով»

*) Շնորհաւորելով Կովկասեան Փոխարքային Նախիջևանի վոկզալում երկու հարեւան քաղաքների՝ Ռօստօվի և Նախիջևանի հայերի կողմից. ահա թէ ի միջի այլոց ինչ ասացինք մենք.—«Կարող է պատահել ձեզ ասեն, թէ եթէ ոչ բոլոր, բայց շատ բանում հայոց հարցի սուր կերպարանք ստանալու մէջ մեղաւոր են հայ յեղափոխականների կօմիտէտները: Եթէ իսկապէս գոյութիւն ունեն այդպիսի կօմիտէտներ, դա նշանակում է Կովկասում ամեն բան բարեյաջող չէ, որ նրան բաժանում է ինչ որ օրգանիկական արատ: Միայն հիւանդուս օրգանիզմում առաջանում են միկրօբներ: Բայց ի՞նչ փորձուած բժիշկ կը սկսէ մաքառել միկրօբների հետ: Բժիշկը կը հեռացնէ այն միջուկը, այն զրութիւնը այն պայմանները, որոնց շնորհիւ հնարաւոր է իրանց միկրօբների գոյութիւնը:

«Ձեր պետական նուրբ խելքով կուք ըմբռնեցիք

միակ միջոցն է հայերին մշտապէս գաղթեցնել
Սիբիր Կովկասից և Անդրկովկասից և այդպիսով
սաքրել Կովկասը հայկական խառնակութիւնից,
իսկ նրանց տեղ գաղթեցնել ուստ գաղթական-
ներ»։ Պարզ է և խորամիտ ինչ օգուտ ասել այդ
մարդատեացներին, թէ չէ կարելի այդպէս ան-
գութ կերպով վարուել ամբողջ ժողովուրդի հետ,
որոնք բաղկացած են կենդանի մարդկանցից? Ոչ!
Բաւական է մարդատեցութիւնը։ Ժամանակ է
որոնել ուրիշ ճանապարհներ եթէ ոչ յանուն առա-
ջադիմութեան և կառավարութեան շահերի։ Ժա-
մանակ է գաղարել այդ անմիտ անէկզոտը պատ-
մելուց, որն անցնում է բերանից բերան։ Իրեւ
թէ մի բարձրագիր Կովկասեան բիւրօկրատ ա-
սել է.—«Ես հանգիստ կը լինեմ այն ժամանակ,
երբ Թիֆլիսի Մուղէումի մէջ ցոյց կը դրուի

այդ, ձերդ պայծառափայլութիւն, երբ մարտի 30-ին գե-
ներալ Մալամայի անունով յղած հեռագրի մէջ ընդգծեցիք,
որ դուք պէտք է յենուէք առողջամիտ մեծամասնութեան
վրայ։ Այդպիսի մեծամասնութիւն կայ մեր մէջ։ Մենք գի-
տենք, որ դուք սիրում էք պարզաբանութիւն, անկեղծու-
թիւն, թոյլ տուէք ինձ ամբողջ պարզաբանութեամբ և ան-
կեղծութեամբ, այդ մեծամասնութեան անունից, յայտնել
ձեզ, որ նա կը լինի ձեզ խոնարհուող, լսող և ձեռք ձեռքի
տուած ձեզ հետ կը զնայ ուր կը կամենաք, եթէ միայն
գուք կը գտնէք օրինաւոր մեր ընական պահանջները, —
մնալ հայ, դաւանել մեր հին կրօնը, մեր հին լեզուն, եթէ
միայն գուք կոչնչացնէք առանձին սահմանափակող օրէնք-
ները, որոնք ստորացնելով հայերի մարդկային արժանա-
ւորութիւնը, չեն բարձրացնում, մեր պէտութեան փառքը»։
«Донск. Рѣчь» 3 мая 1905).

հայի խրտուիլիկը, որով հաստատուի այն փաստը, որ ապրել են երբեմն Կովկասում և հայեր։ Ես այդ գարշելի անէկդօտին հակադրում եմ՝ պատուար խօսքերը մեր մի իմաստուն պետական անձի խօսքերը, որն իմանալով Անդիմանի դէպքերի մասին ցաւօք բացականչեց. «Ահա քսան տարի է ես միշտ յիշում եմ ոռւսացնելու փրկող նախագիծների մասին և մեզ խոստացած անթիւ բարութիւնների փոխարէն ես տեսնում եմ, որ Լեհաստանում մեզ ատում են, Ֆինլադիայում մեզ կասկածում են, Կովկասում նախկին սէրի փոխարէն, բոլոր տեղեղում թշնամութիւն է տիրում և մինչև իսկ Անդիմանում, որտեղ դեռ չեն չորացել ոռւսաց արիւնի առուակները, պատրաստվում է ապստամբութիւն»!»

Մամուլի յայտնի մասը երկար ժամանակ հակառակուելով՝ չէր համակերպվում պատմութեան և փաստերի հետ, ստում և զրագարտում էր հայերին, որոնք յանկարծ դառել են հայրենիքի խառնակիչներ, ուր նրանք ծնուել են, ուր քըրտնաթող բանում են և որք նրանք, հաւասար միւս մնացած ազգերի իրանց արիւնով պաշտպանում են! *):

*) Հայերը տուել են Թուսաստանին այնպիսի տաղանդաւոր զօրապետներ, ինչպէս Մադաթեան, Արդութեան-Երկայնաբազուկ, Բէրութեան, Լօրիս-Մէլիքեան, Շէլիօվսիկեան, Տէր-Ղուկասեան, Լազարեան, Ալիազեան, Տէր-Աստուրեան և այլն։ Ներկայ պատերազմում ոչ մի զօրապետ չը տուին հայերը—նրանց վաղուց արդէն առաջանալ չէին թողնում։

Մենք նորից դիմում ենք ոռուսաց հասարակութեան և խնդրում ենք արդարութեամբ վերաբննել հայոց հարցը:

Մենք հաստատում ենք, որ բոլոր այդ խօսակցութիւնները հայերի անջատման և դաւագրութեան մասին անխիղճ զրապարտութիւններ են պարապ խելքի:

Հայերը երբէք ոռուսաց կուլտուրայի հակառակ չեն եղել: Իւրից վեսելօվսկին երկու գեղեցիկ ֆէլիետօններում, որոնք տպուած են ներկայ գարում «Русск. Въдомости» լրագրում, տպացուցեց, թէ որքան սիրով մեղ մօտ կարդացվում են ոռուսաց բանաստեղծների, հեղինակների, ոռուսաց հրապարակախօնների և ուսումնականների արտադրութիւնները և ինչպիսի անդարձնելի ազգեցութիւն են ունենում նրանք հայկական մտքի և գրականութեան վրայ: Թիւրքիայում և Պարսկաստանում մենք հանդիսանում ենք իբրև առաջնորդներ ոռուսաց կուլտուրայի: Պարսկաստանի խուլ անկիւնների հայոց ուսումնարաններում ոչ թէ միայն աւանդվում է ոռուսաց լեզուն, բայց և ներկայացվում են ոռուսաց պիէսաներ: Բայց ընդունելով ինչպէս մայրական մնունդ ոռուսաց կուլտուրան, կրթուելով նրանով և տարածելով նրան ամեն տեղ, ասիական ամենամուլտանկիւններում նրա վեհ և պատղաստու սերմերը, մենք մնալով հաւատարիմ հպատակներ մեր պետութեան, ամրապէս և անպայման ցանկանում ենք պահպանել մեր լեզուն, մեր կրօնը և աւանդել նրանց ամբողջութեամբ և անձեւնմիւնելի կեր-

պով մեր մանուկներին։ Բայց միթէ դա դաւազ-
րութիւն է?

Իսկ եթէ այստեղ հակակառավարչական բան
չը կայ, եթէ մեր ցանկութիւնները օրինաւոր և
արդար են, այն ժամանակ ամենից առաջ պէտք
է փոխել բոլոր առանձին և սահմանափակող
օրէնքները, հրամանները, շրջաբերականները,
որոնք ուղղուած են հայ լեզուն ոչնչացնելու,
հայ-լուսաւորչական եկեղեցու ինքնուրոյնութիւ-
նը խախտելու և Կաթողիկոսի ազդեցութիւնը
նսեմացնելու համար։

Կովկասի ագմինիստրացիայի սխալները դեռ
չարիքի տակ է։ Զարիքը կը լինի կատարեալ,
չարիքը կը լինի անուղղելի, եթէ նա կը յամառէ
իր սխալների մէջ և չի ուղղի նրանց։ Անկասկած
է, որ ոստիկանական բոլոր խիստ միջոցները
հայերին ուռացնելու գործում վերջացան կա-
տարեալ անաջողութեամբ և տուին ժխտողական,
յաճախ հակառակ հետևանքներ։ Նրանք բորբո-
քեցին ազգային զգացմունքը, զարթեցրին փո-
խադարձ ատելութիւն և անպայման հեռացրին
ցանկալի վայրկեանը հոգեսոր համերաշխութեան
բոլոր Կովկասեան ազգութիւնների ոռւսների
հետ, ամեն ինչ հպատակող, ամեն ինչ յաղթող
կուլտուրայի հողի վրայ այն վայրկեանը, որի
համար արժանաւորութեամբ գործել է ոռւսաց
միտքը և տաղանդը գրականական, նկարչական
և գեղարուեստական ասպարէզում։

Հայերի մէջ հանգստութիւնը վերականգնե-
յու համար՝ անհրաժեշտ է փոխել բոլոր սահմա-

նախակող օրէնքները, որոնց հետ, հայերը երբէք չեն կարող հաշտուել։ Այլ կերպ հանգստութիւնը կը լինի արտաքուստ և կեղծ։

Բայց բաւական չէ հանգստութիւն ստեղծել հարկաւոր է նրան ամրապնդել, մեզ հաւաստիաց նելով, որ անցեալը կը չքացուի, ինչպէս վատ երազ և այլ ևս չի վերադառնայ, երբէք!...

Այդ պատճառով հարկաւոր է բացարձակ ճանաչել, որ Կովկասեան ազգութիւնները նրանց մէջ և հայերը, ունեն նոյն անբոնաբարելի իրաւունքները, ինչ որ ունեն ոռւսները, իսկ ինչ որ գլխաւորն է, պէտք է Կովկասում հաստատել իրաւական կարգը, որից նա զրկուած է և առանց որի երկիրը չէ կարող ծագել բնակչութիւնը չէ կարող ապրել և հանգստութեամբ նուիրուել իր պարապմունքին առանց երկիրովի հաւաստիացած լինելով ժիւտ օրուայ համար։

Այդպիսով հայոց հարցը, ունենալով ի հարկէ, իր առանձնութիւնները, որոնց հարկաւոր է անմիջապէս, վճռել և հեռացնել անմիջական կապ ունի մի աւելի խոշոր հարցի հետ, այն է—ընդհանուր Ռուսաստանի հարցի հետ Դրանում մեզ համոզում է այն և հանրապիրը, որ տուել են հայերը Կովկասի Փոխարքային և մինիստրների խորհուրդին։ Ծանօթանալով այդ հանրագրի հետ՝ ընթերցողը կը համոզուի նրանում, որ և այժմ ընդհանուր շարժման ժամանակ, ոչ անջատումը և ոչ դաւադրութիւնն է հայերի նպատակը։

Հանրագիրը բովանդակում է իր մէջ քսան կէտ և մի փոքրիկ եղբակացութիւն:

Ահա նա ամբողջովին, ինչպէս որ նա տըպագրուած է Թիֆլիսի և ոռւսաց տեղական լրագիրներում:

1) Մացնել կովկասում ոչ դասակարգային զէմստվօի ինքնավարութիւնը, լայն հիմունքներով, հիմնելով դրա հետ.—ա) ինքնավարողական մանր միաւորներ, բաժանելով քաղաքային հասարակական հիմնարկութիւնները առանձին միաւորների և գ) մի ընդհանուր կովկասեաններկայացուցչական ժողով սկզբնական օրէնադիրների իրաւունքով և նախնական դատողութեան Անդրկովկասին վերաբերեալ բոլոր օրէնադրութիւնների: 2) Մացնել երդուեալների դատարան ընդհանուր դատավարութեան ենթակայ բոլոր գործերի համար ի բաց չառնելով և քաղաքական, կրօնական, մամուլի և պաշտօնեանների վերաբերեալ դատերը, նոյնպէս և մտցնել հաշտարար դատաւորների ընտրութեան ինստիտուտ: Թոյրատրել հաշտարար դատարաններում դատավարութիւնը տեղական լեզուներով: Պարտադիր դարձնել, որ դատաւորները և դատարանական քննիչները իմանան հայոց լեզուն այն տեղերում, ուր ազգաբնակչութեան մհծամասնութիւնը կազմում են հայերը: 3) Ոչնչացնել դասակարգային առաւելութիւնները: Հաւասար երկու սեռի: 4) Ազատութիւն խօսքի, ժողովների, գործադուլների և դաշնակցութիւնների: Սահմանել կարգ

մարդասիրական, կուլտուրային, հրատարակչական և այլ կրթական հիմնարկութիւնների բացսան համար, նոյնպէս և պարբերական հանդէսների հրտարակութեան համար։ Ազատութիւն ամեն տեսակ արտադրութիւնների տեղական տպագրութեան ցէնզուրայից դատաստանական պատասխանառութեամբ։ 5) Լեզուի ազատութիւն ժողովների մէջ։ Գործավարութիւն գիւղական դատարաններում նոյնպէս և գիւղական հասարակութիւնների յարաբերութիւնների ժամանակ տեղական լեզուով։ 6) Անձեռնմխելութիւն անձնաւորութեան և ընակարանի։ Անցագիրների սիստէմի ոչնչացումը կայսրութեան սահմաններում։ Փոխել աղմինիստրատիան պատիժները և պահանջները և ոչնչացնել խստացրած հսկողութիւնը։ Վերացնել ոստիկանական պահապանների կազմութիւնը 1898 թուի կանօնադրութեամբ հիմնել զէմստվօի պահապանների կազմութիւն, ենթարկելով նրանց զէմստվօին, իսկ քաղաքային ոստիկաններին—քաղաքներին։ 7) Ընդհանուր ձրի տարրական կրթութիւն։ Կատարեալ ազատութիւն մամնաւոր ձեռնարկութեան բացելու դպրոցներ ամեն տեսակի և ամեն կարգի։ Մասնակցութիւն հասարակութեան ոյժերի կառավարչական միջնակարգ և ստորին դպրոցների կարավարութեան գործում։ Հիմնել Թիֆլիսում համալսարան երկու սեռի համար կովկասագիտութեան և տեղական լեզուների ամբիօններով նոյնպէս և բացել Բարձրագոյն արուեստագիտական դպրոցներ կովկասում։ 8) Պարտադիր ուսուցում

տարբական դպրոցներում հայ երեխաներին հաւ-
լերէն լեզուն դրա հետ աւանդելով ոռուսաց լե-
զուն, ինչպէս մէկը գլխաւոր առարկաներից:
Էռւթջ վերաբերմունք հայոց կրօնի, լեզուի, պատ-
մութեան և գրականութեան աւանդման վերա-
բերմամբ կառավարչական կրթական հիմնարկու-
թիւններում միատեսակ միւս գլխաւոր առարկա-
ների աւանդման հիմունքներով: Խղճի ազատու-
թիւն: Ոչնչացնել բոլոր կրօնական և հոգևոր սահ-
մանափակումները: Մայրենի լեզուով երդման ա-
զատութիւն բոլոր կառավարչական և հասարա-
կական հիմնարկութիւններում: 10) Վերականգ-
նելով ինքնավար հայ եկեղեցու կարգը՝ փոխելով
բոլոր սահմանափակումները և խստութիւնները,
գլխաւորապէս, ա) կալուածների կառավարու-
թեան մէջ, թ) ծխականների հոգևոր վարչական
անձերի ընտրութեան վերաբերմամբ, այսինքն՝
էջմիածնի սինօդի անդամներ, թեմական առաջ-
նորդների, յաջորդների ընտրութեան նկատմամբ,
և գ) պարբերական կայացում հոգեսոր-հասարա-
կական ժողովների ինչպէս Ռուսահատանի, նոյն-
պէս և համայն հայկական թեմերից: 11) Վերա-
դարձնել հայ եկեղեցուն իր ծխական դպրոցնե-
րը, կայքերը, փոփոխելով բոլոր օրէնքները և
կարգադրութիւնները սկսած 1884 թուից մինչև
1903 թիւը, որոնք վերաբերում են թէ
հկեղեցական-ծխական դպրոցներին և այդ դըմ-
լոցների կայքերին և թէ հայոց եկեղեցիներին,
վանքերին և հոգևոր սեմինարիաներին: 12) Հիմ-
նել կովկասում հայ-կաթոլիկների թեմ հայ ծա-

գումով և հայ-կաթօլիկ դաւանութիւն ունեցող
եպիսկոպոս թեմական առաջնորդով: 13) Մացնել
շահագործութիւնների հարկ ոչնչացնելով կողմնա-
կի հարկերը առաջին հարկաւոր առարկաներից:
14) Բարելաւել բանւորների աշխատանքների
պայմանները: Կարգաւորելով աշխատանքի ժա-
մերը օրէնտդրական եղանակով և հեռացնելով
խստութիւնները բանւորական դաշնակցութիւն-
ների վերաբերմամբ: 15) Պարտադիր դնում ամ-
բողջ համայնքների և ժամանակաւոր պարտադիր
գիւղացիների կողմից միւլքատարների հողաբա-
ժինները, գանձարանի աջակցութեամբ ներքին
նահանգների ընդհանուր հիմունքներով: Աջակ-
ցութիւն գիւղական համայնքներին մասնաւոր
սեփականատէրերից այն հողերը, որոնցով մշտա-
պէս իրանք օգտվում են, գիւղական բանկերի
օգնութեամբ, նրանց պարտաւորացուցիչ փոխա-
տւութիւններով: 16) Թոյլատվութիւն մասնաւոր
զրամական հիմնարկութիւններին շրջանառու-
թիւններ անել գիւղական հողերի գնելու գործո-
ղութիւններում: 17) Գերակշռութեան իրաւունք
տալ հաստատուել ազատ արքունական հողերի
վրայ տեղական անհող և քիչ հող ունեցող գիւ-
ղացիներին Անդրկովկասի սահմաններում հեշտու-
թիւն տալ գիւղական հասարակութիւններին օգ-
տուել անտառից, դաշտից և արօտաեղերից:
18) Փոխել խստագոյն և առանձնական օրէնտ-
դրութիւնները և կառավարչական կարգադրու-
թիւնները, որոնք վերաբերում են ոռւսահպատա-
կութիւն ընդունած թիւրքահայ զաղթականներին

և յատկացնել նրանց միւս հպատակներին հաւասար իրաւունքներ հողաբաժիններ ստանալու Անդրկովկասի սահմաններում: 19) Զինուրագրական պարտաւորութիւնները հայերը կատարելիս խաղաղ ժամանակ մնան Անդրկովկասիան սահմաններում: 20) Վերադարձնել բոլոր հայերին, որոնք աքսորուած են վարչական կարգով և ընդհանուր ներումն բոլոր այն անձնաւորութիւններին, որոնք տանջվում են քաղաքական և կրօնական յանցանքների համար: Բոլոր վերոգրեալ կէտերի իրագործելու համար հարկաւոր է գումարել համայն Ռուսաստանի ներկայացուցչական ժողով, ընդհանուր հիմունքներով, հաւասար, ուղիղ և զագտնի ձայնաւորութեամբ, թոյլատրելով հայ հասարակութեան մասնակցել այնտեղ Ռուսաստանի ներքին նահանգների հիմունքներով *):

Սրանք են հայերի ցանկութիւնները: Կը գտնեն նրանք համակրութիւն կառավարչութեան կողմից, մենք կը տեսնենք մօտիկ ապագայում: Կը նկատենք, միայն, որ կովկասը կատարեալ անիշխանութեան սկզբներումն է գտնվում: Ո՞վ չը գիտէ, որ վերջին տասնամեակում աւազակու-

*) Տես № 88 «ՀՕՅ. Օբօր.» 1905 թ. ապրիլի 23-ին:

թիւնները, թալանումները, բազմացել հն ահան-
լի քանակութեամբ։ Եթէ առաջ կրղոպառում էին
մութ գիշերները մեծ փողոցներում, այժմ յար-
ձակվում են գնացքների, կայարանների, մինչև
իսկ պահականոցների վրայ, կողոպտում են օրը
ցերեկով և կենդրոնական փողոցներում աղմկալի
քաղաքներում։

Այդ երեսյթը կարող է իրան համար բա-
ցատրութիւն գտնել նրանում, որ բոլոր նուանդ-
ները, բոլոր ջանքերը ամբողջ ժամանակ կովկա-
սեան իշխանութիւնը ապարդիւն կերպով գործ
էր դնում երևակայական հայ դաւադիրների դէմ
մաքառման համար։ Ոչ մի անգամ կովկասի աղ-
մինիստրացիան և չը մտածեց ապահովել երկիրը։

Մի, անդամ ընդ միշտ բոլոր մութ աւազա-
կաբարոյ տարբերից որ և է գործնական միջոց-
ներով—կուլտուրային կրթական ճանապարհով,
վասնորոյ կարճ՝ միջոցում նա կարողացաւ հայե-
րի մէջ, այդ տեղական ամենախաղաղ տարրի
մէջ, ստեղծել յուզմունք, փոթորիկ և անբաւա-
կանութիւն։ Այդ բոլորին միանում է այժմ բան-
ւորների ընդհարումները արտադրութեան բոլոր
ճիւղերում և լուրջ ազրարային շարժում, արդէն
համակուած ամբողջ նահանգներ։

Այդպիսի ահարկու փոթորիկ բարձրացաւ։
Բայց այդ փոթորիկը կը հանգստանայ։ Փոխար-
քայի նշանակուելով յանձին լուսաւորուած կոմս
ի. ի. Վօրօնցով՝ Դաշկօվի՝ հեռում արդէն լոյս է
տալիս նոր կեանքի հորիզոնը։ Այդպէս ուզում
ենք հաւատալ, որ կը համնի, վերջապէս, վաղուց,

կոկիծով մեր սպասած լուսատու օրը, իսկ նրանով կը ցըռուի այդ մութ խաւարը, որի մէջ արդէն տասնեակ տարիներ մենք հեծում ենք։ Այդպէս ուզում ենք հաւատալ, որ Կովկասի բոլոր ազգութիւնները իրանց մեծ եղբօրց—ուստիների հետ, ձեռք ձեռքի տուած սիրոյ համաձայնութեան մէջ, միասին և հաստատ քայլերով կը զնան ցանկալի և բեղմնաւոր աշխատանքի կուլտուրայի և ազատութեան շաւզով!...

Եւ այն ժամանակ Կովկասը, այդ ուստաց թագի դեղեցիկ գոհարը, աղօտացած իր վրայ փշուած փոշուց, նորից կը սկսէ վայելի իր սրանչելի փայլով!...

